ՄԱՀՄՅՈՒՅՑԱԿ

ՀԱՆԳԵԱՒ Ի ՏԷՐ

ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՄԵԱՆՑ

ՅՈՒՆՈՒԱՐԻ 23-ԻՆ ԵՒ ԹԱՂՈՒԵՑ ՅՈՒՆ. 26-ԻՆ։

Հանգուցեալը աշխարհական ծնողների որդի էր, ծնուած Երևանում։ Իր ուսումն և դաստիարակութիւնն ստացաւ Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցում։ 1837-ին մտաւ հոգևոր կոչման մէջ և ուրարակիր էր։ 1838-ին ձեռնադրուեց աւագ-սարկաւագ, 1842-ին ստացաւ աբեղայութիւն։ 1846—1848 կարգուած էր վանական տպարանի կառավարիչ։ 1848-ին Սինոդի կարգադրութեամբ ուղարկուեց Երևան իբրև Նախանգամ և գանձապահ Կոնսիստորիայի և այդ պաշտօնում մնաց մինչև 1857 թ. 1859-ին Մատթէոս կաթուղիկոսից պարգևատրուում է վարդապետական խաչով և ծաղկեայ փիլոնով։ Նոյն կաթողիկոսի առաջարկութեամբ վարձատրուում է Թուրքաց Սուլթանից Մէճիտիէ 3-դ աստիճանի շքանշանով։ 1849-ին նշանակուում է քննիչ Ալեքսանդրապոլի յաջորդութեան։ 1858-ին, ի թիւս ուրիշների գնում է հրաւիրակ Կ. Պոլիս, Մատթէոս կաթուղիկոսին ուղղեկցելու։ Նոյն թուին նշանակուում է յաջորդ Ղզլարում։ 1860-ին նշանակուում է Էջմիածնում Հիւրընկալ։ 1861-ին Մատթէոս կաթուղիկոսից ձեռնադրուում է եպիսկոպոս և նոյն թուին նշանակուում է յաջորդ Հին-Նախիջևանի։ 1863-ին նոյն պաշտօնով տեղափոխուում է Ալեքսանդրապոլ։ 1864-ին ստանում է Արք-եպիսկոպոսութիւն, սոյն այս թուին նշանակուում է

կառավարիչ Ղարաբաղի թեմի։ 1866-ին միևնոյն պաշտօնով փոխադրու